«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

*Քաղվածք*

Հոդված 386. Զանգվածային ոչնչացման զենք տարածելը

Deleted: Հոդված 38 ... [1]

Քիմիական, կենսաբանական, միջուկային կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք, ինչպես նաև դրանց փոխադրման հատուկ միջոցներ ստեղծելը, արտադրելը, ձեռք բերելը, մշակելը, տիրապետելը, փոխադրելը կամ իրացնելը, միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենքի փոխադրման հատուկ միջոցներ օգտագործելը, միջուկային զենքի չտիրապետող պետությանը հումքային կամ հատուկ տրոհվող նյութեր հանձնելը, միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենք կամ դրա արտադրության համար անհրաժեշտ բաղադրամասեր տրամադրելը`

պատժվում են ազատազրկմամբ` չորսից ութ տարի ժամկետով:

**Page 1: [1] Deleted** **Zaruhi Badalyan** **8/17/2017 10:29:00 AM**

Հոդված 386. Զանգվածային ոչնչացման զենք արտադրելը կամ տարածելը

Քիմիական, կենսաբանական կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք ստեղծելը, արտադրելը, ձեռք բերելը կամ իրացնելը, միջուկային զենքի չտիրապետող պետությանը հումքային կամ հատուկ տրոհվող նյութեր հանձնելը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենք կամ դրա արտադրության համար անհրաժեշտ բաղադրամասեր տրամադրելը`

պատժվում են ազատազրկմամբ` չորսից ութ տարի ժամկետով: